

ՊԱՏՈՒՌՈՅ ԱՏԵԱՆ

— 0 —

Ընդարձակ յաւելուածով մը, «Դրօշակ»ը հը-
րատարակեց վերջերս Վերայազմաւ Հնչակեան
կուսակցութեան եւ հայ յեղ. Դաշնակցութեան
միջեւ Միութեան նպատակով կատարուած
քանակցութեանց տեղեկատուութիւնը, եւ
հաւաքածուէն այն տորիւմաններուն որոնք
Դրօշակեան կուսակցութիւնը մղած են Արփի-
արեանը «մատնել» հռչակելու «Դրօշակ»ի այդ
յաւելուածը երկու մասի կը բաժնուի ուրեմն,
որոնք ինծի համար իրարմէ բոլորովին ան-
ջատ են, Թէ՛ յայտ Միութեան խնդրոյն մէջ,
երկու կողմէն ո՛ր աստիճան անկեղծութիւն,
ո՛ր աստիճան կանոնաւորութիւն, յստակ ու
հետեւական վարմունք ցոյց տրուած է, ասի
ուրոյն հարց մըն է, որմով յետոյ պիտի
զբաղինք, Թէ՛, ասկից զատ, Դրօշակեան կու-
սակցութիւնը որ սկիզբէն ի վեր Հնչակեան
կուսակցութեան հանդէպ հակառակորդ եւ
թշնամի մարմնոյ մը վարմունքը ցոյց տուած
է ամէն պարագայի մէջ (Սատուռ, Պոլիս, Զէյ-
թուն, եւն), ո՛ր աստիճան իրաւունք ունի
բարձրահայեաց եւ անկողմնակալ ուսումնասի-
րութեան մը ձեւերն առնելով՝ իր Յատուա-
ծին առջին մասին մէջ Հնչակեան կուսակ-
ցութեան բովանդակ գործունէութիւնը արհա-
մարական քննադատութիւն մը անցնելու, երբ
մանաւանդ ինքն իսկ Հնչակեան կուսակցու-
թեան ծրագրի շոյնութեամբ ընդգրկած եւ
միեւնոյն ուղղութեամբ գործած է՝ լոկ կազմա-
կերպութեան եւ գործադրութեան մանրամաս-
նութեանց տարբերութիւններով, — աս ալ
զատ հարց մըն է, եւ շատ չահեկան հարց,
որմով յետոյ կարելի է զբաղիլ, որմով Հնչակ-
եան հին գործիչները մանաւանդ պարզաբ. ու-
նին զբաղելու՝ հայ յեղափոխութեան պատ-
մութեան ճշգրտի գործին համար Վստայժմ,
կարեւորը, կենսականը, յաւելուածին երկրորդ
մասն է, այն մասը որ կը պարունակէ Արփիա-
րեանի «մատնել» ըլլալն» բառ Դրօշակեան կու-
սակցութեան ապացուցանող տորիւմանները,
Այդ տորիւմաններուն վերջնականապէս համո-
զիչ եւ անհրժեք ըլլալուն մասին տարակու-
սիլը երբեք չ'ենթադրեմ Վերայազմաւ Հնչա-
կեան կուսակցութիւնը յեղափոխական «ան-
թերի» եւ «սեռական» կազմակերպութիւն մը

համարիլ, — ասի վերջնապէս պէտք է լաւ մը
ճշգրտի եւ հասկցուի, Հարցը, բուն հարցը, կը
կայանայ գիտնալու մէջ թէ Արփիարեան ի-
րօք մատնելի գեր կատարած է թէ ոչ, Այս
հարցին լուծուելէն յետոյ է որ այդ խնդրով
եւ ուրիշ շատ մը յարակից խնդիրներով կա-
րելի պիտի ըլլայ լրջօրէն զբաղիլ:

Ամէն ոք կը յիշէ որ երբ 1897ին Վառնայի
թերթերէն մէկուն մէջ «Հրանդ» իր ամբա-
ստնիշ յօդուածներուն շարքը սկսաւ հրատա-
րակել, եւ զայրոյթի աղաղակ մը բարձրացու-
ցի ի տես այդ գայթակղեցուցիչ ընթացքին
որով հանրային գործիչ մը կ'անաւանարիէին
ամենէն մահացու ամբաստանութեամբ առանց
չօչափելի փաստեր մէջ բերելու, Զայրոյթս
այնքան աւելի բուռն էր որ կը ճանչնայի
Արփիարեանը եւ զինքը անկարող կը նկատէի
դրամական նկատումներով ազգը մատնելու
հրէշային արարքին, եւ իսկ այդ ապագորու-
թեան մէջ կը զօրացնէր իսկ պարագայն ալ որ
Արփիարեան ամենէն առաջ պահանջած էր,
«Մարտ»ի յօդուածով մը, որ տորիւմանները
հրատարակուին, եւ պատուոյ աստեան մը կազ-
մուի՝ խնդիրը վերջնապէս լուծելու համար,
Գովելով Արփիարեանին պահանջը, ձալ-
նակցեցայ իրեն «Իրաւունք»ին զրկած յօ-
դուածով, եւ յայտարարեցի որ ազգին համար
անբարոյացուցիչ ու «վնասակար եղող այս
խնդրոյն վերջնական լուծուած մը տալու
համար» անհրժեշտ էր պատուոյ աստեան մը
կազմել, ու եւ ի կուսակցութեան չպատկանող,
անկախ եւ անկողմնակալ անձնաւորութեանց
դատարանին ենթարկել այս հարցին քննու-
թիւնը:

Այժմ, կը մտածեմ որ «Դրօշակ»ը շատ ազէկ
բան մը ըրած է տորիւմանները հրատարակե-
լով: Առաջին քայլն է այդ կը մնայ երկրորդը
առնել, կարեւորագոյնը, — պատուոյ աստեանը
կազմել Դրօշակեան կուսակցութիւնը կը կար-
ծէ թէ իր տորիւմանները կը բաւեն վէճի ա-
ռարկայեղած խնդիրը լուծելու, բայց Դրօշակ-
եան կուսակցութիւնը չի կրնար պահանջել
որ բոլոր Հայերը միեւնոյն եղանակով մտա-
ծեն եւ կուրօրէն խորաբնիկ ազգ վճռին առջեւ,
Անհրաժեշտ է քննել այդ տորիւմանները, ա-
նոնց մէջ չարուած «Իրողութիւններուն» ըս-
տուղութիւնը ճշդիւ, եւ երկրպագութեան մը
յանգիլ, Առաջին նայուածքով իսկ, այդ տո-
րիւմանները կը ներկայացնեն խառնակ, ան-
խնամ, քմածէն քառո մը ամէն տեսակ նիւ-

թեղէններու . տոբիւմաններու հաւաքածուն պատրաստողները անոր մէջ թխած են ամէն ինչ որ ձեռքերին ինկած է՝ առանց ոեւէ մանրակրկիտ ու խիտ քննութեան : Մինչև անգամ զիջած են հոն տեղ տալ ոեւէ Սօսիի մը սա ծծաղելի զրպարտութեան թէ «Ապա-հովութեան համար Չօպանանի հասցէին եկած իմ մանակները ստորութիւնամբ քաջուռն էին» : Ինչ որ բացարձակ ստու թիւն մըն է . ես ամենայն խնամքով զրկած եմ այդ պարոնին նա-մակները , առանց անոնց երբեք զգչելու . (այս անհշտ մանրամասնութիւնը կը յիշեմ ցոյց տալու համար թէ «Դրօշակի Յաւելուած»ին մէջ ի՛նչ արտօնաւ ողորմելի ցեխացայտներ հիւրընկալուած են «Իբրեւ փաստ») : «Դրօշակ»ը Արփիարեանի մատնչութիւնը հաստատելու համար ամենա-կարեւոր տեղ մը կուտայ «մեղայագրին» . արդ , այդ «մեղայագրէն» յետոյ — որ Արփիարեանի բարոյական տկարացման մէկ տիւտը վարկեանին ծնունդն է , բայց ինքնին չի կրնար երբեք անոր «մատնչութիւնը» ապացոյց սեպելու , —ոչ միայն այսօր բոլոր Հայոց յարգանքը վայելող շատ մը զրպաշտներ , այլ եւ եւտուտֆեան , «Հարան» եւ «Օրթմալ» Դրօշակեանները եկած են երկար առնել , «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ բարեխմբագրութեան արձակ-ցել Արփիարեանին , մինչդեռ այդ բանը պիտի չընէին եթէ այդ «մեղայագրը» բաւէր Արփիարեանին մատնչութիւնը հաստատելու : Տղբու-մաններուն կեդրոնական , էական կտորը , մի-փիարին հարցաքննութեան թղթերը , մէկ քանի կապակածելի նախաձեռնութեան կը ներկայացնեն դրոշմը անկարելի է չնկատել : Այդ թղթերը Դրօշակեան կուսակցութեան յանձնուած են Թիւթիւնճիքի մատնչութիւնի ձեռքով , սաի ամենքս գիտնք , եւ Դրօշակեան կուսակցութեան անօրէն մարմինը ամենէս աւելի լաւ գիտէ այդ բանը , արդ , յաւելուած , որ ամենաշինչի մանրամասնութիւններ յիշատակ է , այս կարեւոր մանրամասնութիւնը բոլորովին քօղարկած է . ինչո՞ւ համար : «Դրօշակ»ի խմբագրութիւնը գիտէ որ Թիւթիւնճիքի այդ թղթերուն գիւտը կատարեց՝ Արփիարեանի հետ խմբագրական կուի մը ունենալով անմիջապէս յետոյ (Արփիարեան մերժած էր հրատարակել Թիւթիւնճիքի մէկ գրքին ազգը «Հայրենիք»ին մէջ , որովհետեւ չէր ուզեր որ մատնիչի մը անունը երեսնայ «Հայրենիք»ին մէջ) , այդ մասին ոչ ի՛նչ «Դրօշակ»ի յաւելու-

ածին մէջ , Յետոյ , ինքնին , այդ թղթերը առեղծուածային երեւոյթ մը ունին . ինչո՞ւ Թիւթիւնճիքի պարզ ու բնական զաղափարը չէ ունեցած հարցաքննութեանց թիւերէն բընագիրը նոյնութեամբ ընդօրինակելու , — ինչ որ շատ աւելի «կարելի» կը դարձնէր անոնց հոգեբանական ուսումնասիրութիւնը , — եւ զանոնք հաշիւելի թարգմանելու աւելորդ նեղութիւնը յանձն առած է : Նպատակս «Յաւելուած»ին մանրամասն վերլուծումն ընել չէ , չեմ կրնար զայդ ընել , որովհետեւ կարգ մը կէտերու համար վերագտուողութեան միջոցներ ինծի կը պակսին : Միայն եւ թէ այս մէկ քանի դիտու-ղութիւնները կը ներկայացնեն՝ ցոյց տալու համար որ այդ «Յաւելուած»ը ընտթիւն չու-նի իբրեւ անհրաժեշտ փաստերու յիշատակա-րան մը կանգնելու , որուն առջեւ ո եւ է Հայ պարտաւոր ըլլալ՝ ճշմարտութեան մօրժեղի յայտնութեանէն շլացած՝ խոնարհիլ : Ընդհա-կատակն , ոչինչ այնքան կը զգացնէ մանրա-մասն ու խղճատու վերաքննութեան մը պէտքը որքան այդ Յաւելուածը : Ուրիշն աստեւի քան երբեք անհրաժեշտ է պատուոյ արեանի մը կազմութիւնը :

Դրօշակեան կուսակցութիւնը իր յաւելուածին մէջ կ'աղաղարած թէ ինքը չ'ընդունիր ո եւ է նոր վիճակ այս ինդուրյն նկատմամբ , եւ թէ Պոլսոյ քոմիթէին վճիռը , որուն վրայ կը հիմնուի , իրեն համար վերջնական է : Կուսակ-ցութեան մը սկզբունքներուն տեսակէտէն , այս տարամեծութիւնը կընայ բացատրելի ըլլալ . կուսակցութիւն մը երբ մահուան վճիռ տալու շափ կը համոզուի անձի մը մատնելու չուրեմ , ըսական է որ տրամադրել չըլլալ ընդունելու որ իր վճիռը «քննութեան երթար-կուելու կարօտ է» : Ինչպիսիք ապրտաւոր չէ աչեքը զոց իբրեւ ճշմարտութեան ընդունիլ կուսակցութեան մը վճիռը : Կուսակցութիւն մը շատ անգամ . կուսակցական կըքերու բոր-բոքումէն կուրացած , կրնայ զաղոխտկցարար ծայրայեղութեանց եւ միալ դատողութեանց մղուիլ : Անկուսակցամոլ , ամէն կերպով ան-չահանդիւր եւ անողորմալաւ ասեան մը մի-այն կրնայ այսպիսի հարցի մը վերջնական պատասխանը տալ : Դրօշակեան կուսակցու-թիւնը , որ համոզուած է իր վճիռն ճշդու-թեանը , փափաքող ըլլալու է որ այդ պա-տույ ասեանը կազմուի : Իսկ վերակազմու-հնչական կուսակցութեան համար տրեական պարտականութիւն մըն է այդ Ատեանին կազ-

մութիւնը պահանջել, Ատեանը պէտք է կաղ-
մուի այնպիսի անձերէ որոնց անկողմ
նախաւորութեանը եւ պարկեշտութեանը հա-
մոզուած ըլլան երկու կուսակցութիւններն
ալ, Այդ ատեանը պէտք է որ մի առ մի քննէ
յաւելումներն բոլոր իրողութիւնները, գրաւոր
վարչութիւններ պահանջէ թիրաքեանի վաշ-
րամ պէջ Տատեանի պէս անձերէ՝ որոնց կը
վերաբարձին Յաւելումներն մէջ որոշ կար-
ծիքներ, և որոնք պարտաւոր են յայտնել թէ
ի՞նչ կը մտածեն իրենց վերադարձած այդ
կարծիքներուն նկատմամբ, Այդ ատեանին վը-
ճիւղը ամենքը պարտաւոր պէտք է ըլլան ըն-
դուհեւու իրիւր վերջնականը, և այդպէսով
միայն պիտի փարատի այդ անտանելի մղձաւա-
նը որ մեր աղղղային դարձունէութեան միջո-
ւորտին մէջ ամենէն վնասաբեր երեւոյթներէն
մէկը եղած է:

Իրօշակեան կուսակցութիւնը, օգնելով որ
այս ատեանը կազմուի, «հայրաբարկական
գործ» մը կատարած պիտի ըլլայ իր մերժումով՝
ճշդ հակառակը, Իրօշակեան կուսակցութիւնը
երկսարքաբանութեան մը առջեւ կը գտնուի.
եթէ համոզուած է իր վճռին ճշդութեանը,
պէտք է այժմէն վտառ ըլլայ ինչ կազմու-
ելիք Ատեանը իրաւունք պիտի տայ իր վըճ-
ռին քանի որ Ատեանը պիտի թաղկանայ պար-
կեշտ և անկողմնակալ Հայերէ, և այս պարա-
գային, պէտք է որ խանդավառութեամբ ըն-
դունի պատուոյ ատեանին կաղմութիւնը, եթէ
չընդունի, պիտի ապացուցած ըլլայ՝ ա՛. թէ
վտառն չէ իր վճռին ճշգրտութեանը, կամ՝ ք.
թէ չի նաւասար որ ամբողջ հայ ազգին մէջ
4 կամ 6 Հայ կրնան գտնուիլ որ բացարձա-
կապէս պարկեշտ, անկողմնակալ եւ արգա-
րադատ ըլլան:

Ա. 2.

Թ. Գ. «Մարտ»ի վերջին թուոյն մէջ, կը
տեսնենք Թ. Գ. Յակոբեանի և Իսկընտերի մէկ
նամակը, որով պէտքը կը զգացնեն պատուոյ
ատեանի մը եւ անոր վարչապետութիւնը կազմու-
թիւնը կը պահանջեն ազգային ընդա-
նուր բարոյականին համար իրեւե անբաժան
կարիքի մը գոհացումը, Բրոքի, Յակոբեան և Թ.
Իսկընտեր հանրաժանութի են իրենց բազմամասն
անձնուէր, անհաշակողի գործունէութեամբը,
և շատ զոհեմ որ այս պարագային մէջ իրենց
հեղինակավոր ու ազնիւ ձայնը լսելի կ'ընեն,
չորջ տալով չարիքին միակ դարմանը որ կա-
րելի է և և փափաքելի:

«ՔՐԻՐԻՏԻՍՄԱՆ» ԼԱԳԻՐԸ

— 0 —

Անուբանալի ճշմարտութիւն մըն է որ մեր
գաղթ արդիւնաւոր պաշտպանութեանը համար
ինչքան որ պարտաւոր ենք հետեւել եւրոպա-
կան քաղաքականութեան ընթացքին, այնքան
ալ՝ և աւելին, պարտաւոր ենք ի նկատի ունե-
նալ մեր դրացիներու տրամադրութիւնները,
և ինչ նշանակու թիւն որ ունին միշտ համար
Եւրոպայի համակրական արտայտութիւններու
և իրախոսանքները՝ անոնց չափ նշանակա-
կալից ու կարեւոր են և դրական օգուտ ունին
մեր դրացիներու ձայնակցութիւնները: «Քրի-
տիսման» լրագիրը այժմ արժանաշէ կը հանդի-
սանայ մեր ամենամտելի գրացու և քննակնի-
քիւրսի ձայնին, երկրորդ տարին է որ կը հը-
րատարակուի այս թիւթը՝ տնօրէն-խմբագրու-
թեամբ Պէտրիան պէվի որդի Ապտիւրահման
պէկի, կիսամեայ հրատարակութեամբ, քոչե-
րէն լեզուով և մասամբ ալ՝ երիտասարդ թուր-
քերու ինգլիզերէով, թուրքերէն լեզուով, նախ
Կահիրէի, յետոյ Ժնեւի և վերջերս կրկին
Գահիրէի մէջ:

«Քրիտիսման»ը քաղաքակրթութեան այժ-
մեան հակադէմոյ յառաջիկայացութեան մէջ,
յետմանաց յատուկ փուլ թելադրութեամբ և
աւանդով իր փոքրիկ ծաւալին մէջ ջանացած է
ընդգրկել կեանքի ու փամանակի բոլոր անշա-
նչու պայմանները ու հայերէր անշուշտ իր
կարողութեան ու միջոցներու չափով:

«Քրիտիսման»ի տնօրէնը բմրեւած ըլլալով
որ ազնու և սուրուկ հասարակութեան մը վի-
ճակին արեւտական բարեփոխումը կախուած
է սոսկ այդ հասարակութեան կրթութիւնը և
տանալէն, իր թիւթին մէջ առաջին տեղը
տուած է կրթութեան զարգացումութեանը: Եւ
իրաւ «Քրիտիսման»ի գրեթէ իւրաքանչիւր
համարի խմբագրականը քարոզ էլ կը թու-
թեան կարեւորութեանը և անբաժանու-
թեանը մասին և ցնցող հրաւէր մը քերտ հա-
սարակութեան հոգով անոր փառքին և փու-
թով անոր տիրանալու: «Քրիտիսման»ը իր
այս վարդապետութեան համար կը գործածէ
իր ամսիկ ընթերցողին հասկանալի լեզու մը
և, մօռնիկ տալու համար անորից զազափար-
ներու ճշմարտութիւնը, փաստիւր, օրինակներ
առաջ կը բերէ բնութիւնէն, գրացի ծանօթ փա-
ղովու րդենքէն, և նոյնիսկ «Պուրան»ն ու իր
դուռի և կը ցանայ բնութիւնի տալ իր օր-
գովորին, որ քերտք իր այժմեան աւագակ
ազգի ամօթալի ու տխուր համբաւը կը պար-
տի սոսկ իր գործողութեանը: Սե՛ն ինչ և և ա-
ւատ ունի ու կը ներշնչէ թէ քերտն ու ըն-
դունակ է և կրնայ ապագային՝ իրբիւ ալեւ
սկան ցնէ ժողովուրդը իր իրեն յառուկ պա-
տուաւոր դիրք մը ունենալ մարդկութեան մէջ՝
եթէ ջանայ չուտով թօթափել իր միտքը պար-
փակող տգիտութեան մառախուղը: Եւ «Քրիտ-